ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 399- Ա

«ԿԱՊԱՆԻ N 13 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ, ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՍՏՂԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, հիմք ընդունելով կազմակերպության կանոնադրության 59-րդ կետը և «Կապանի N 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Ժ. Վարդանյանի 27.08.2026թ.-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. 2026 թվականի օգոստոսի 27-ից լուծել «Կապանի N 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Ժաննա Վարդանյանի հետ 2026 թվականի մայիսի 7-ին կնքված N 17 աշխատանքային պայմանագիրը:

2. «Կապանի N 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Աստղիկ Համբարձումյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության Համակարգողի պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

3. Կազմակերպությունում գույքի հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

2026-08-27 15:06:02 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 27
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2026թ. օգոստոսի 27-ի
N 355-Ա որոշման

ԿԱԶՄ

«Կապանի N 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գույքի հանձնման-ընդունման հանձնաժողովի

Նարինե Աթայան	Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահ).
Աստղիկ Համբարձումյան	«Կապանի N 13 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող, ընդունող.
Ժաննա Վարդանյան	«Կապանի N 13 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող, հանձնող:

2026-08-27 15:02:34 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**